24.գ	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	

**ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N _____

ք. _____

«___» _____ 20 թ.

_____ -ը ի դեմս _____ -ի, որը գործում է _____ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և _____ -ը, ի դեմս տնօրեն _____ -ի, որը գործում է _____ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և ԿՄՆՀՀ ԷԱԾԱՊՁԲ24/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը:

Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 0 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:

պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 0 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁰

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2:¹¹

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:¹²

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2:¹³

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

¹⁰ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹¹ Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

¹² Գանձապետարանում հաշիվներ չունեցող պարտավորյալների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

¹³ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխարային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹⁴ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:¹⁵

¹⁴ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

¹⁵ Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:¹⁶

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:¹⁷

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

¹⁶ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁷ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապետել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15:¹⁸

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

¹⁸ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհիզապարիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տրուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	ամբողջական անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը *	տեխնիկական բնութագիրը
1	15842110	Շոկոլադե կոնֆետների տեսականի՝ տուփով	«Դեֆիլե» «Հոլդինգ Դոլչիարիա Իտալիանա ՍՊԱ» Իտալիա	Քաշը՝ 450 գ: Շոկոլադե պրալինների ասորտի: Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի յուղ, անարատ չոր կաթ, կակաոյի քերուք, բուսական ճարպեր, միջուկում տարբեր մասնաբաժիններով՝ կոկոսի , արմավենու, արմավենու միջուկի, անտառային ընկույզ, շիճուկի փոշի, հացաբոյսեր, եգիպտացորենի ալյուր, բրնձի ալյուր, ցորենի ալյուր, շաքար, ցածր յուղայնության կակաոյի փոշի, գարու ածխի էքստրակտ, աղ, յուղագերծած կաթի փոշի, էմուլգատոր, սոյայի լեցիտին, բուրմամսավետիչներ: Կաթնային շոկոլադե, կակաոյի զանգվածը նվազ 29%, կաթ, զանգվածը նվազ՝ 14 %: Կաթնային շոկոլադե պնդուկի կրեմով, կակաո զանգվածը նվազ 24 % ,կաթնային զանգված նվազ 11% : Պարունակում է կաթ , գլյուտեն և սոյա: Հնարավոր է պարունակի նուշի հետքեր: Չի պարունակում ԳՁՕ : 100Գ էներգետիկ արժեքը 2246 կՋԼ/538 կկալ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70 %: Տես նաև * ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
2	15842110	Շոկոլադե կոնֆետների տեսականի՝ տուփով	«Վենեցիա Գրանդե», «Հոլդինգ Դոլչիարիա Իտալիանա ՍՊԱ» Իտալիա	Քաշը՝ 290գ/ միջուկով հատընտիր շոկոլադեներ: Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի յուղ, կակաո-զանգված, անարատ կաթի փոշի , պնդուկ, բուսական ճարպեր, (միջուկում տարբեր մասնաբաժիններով (կոկոս , արմավենու միջուկի , արմավենու)), կաթի խտանյութի փոշի, հացաբոյսեր(եգիպտացորենի ալյուր , բրնձի ալյուր, ցորենի ալյուր, շաքար, յուղագերծած կակաո-փոշի, ածխի հյութ, աղ), ցածր յուղայնության կակաո-փոշի , յուղագերծած կաթի փոշի , էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչներ : Հնարավոր է այլ ընկույզների մնացորդների առկայություն: Կաթնային շոկոլադե, կակաո փոշի, մին, 29 % , փոշի կաթ մին. 14%: էներգետիկ արժեքը 2242 կՋԼ, 537 ԿԿԼ: Ճարպերը՝ 30,6 գ, որոնցից հագեցած 18,1 գ, ածխաջրերը 58,6 գ, որոնցից շաքար 56,5գ մանրաթելեր 2,6 գ, սպիտակուցներ 5,6 գ, աղ 0,2 գ Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70 %: Տես նաև * ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
3	15842110	Շոկոլադե կոնֆետների հավաքածու տուփով	«Մերսի» (Merci) AUGUST STORCK KG Գերմանիա	Շոկոլադե կոնֆետների 8 նրբաճաշակ տեսակներ՝ տուփով/ ընկույզով կրեմ, կաթնային շոկոլադե, անտառային ընկույզ և նուշ, պրալինե կրեմային միջուկ, մուգ շոկոլադե, մարցիպան, մուգ մուս, սուրճ և սերուցք Քաշը՝ 400գ. Շոկոլադե կոնֆետ, << Կաթնային շոկոլադե >> Բաղադրությունը՝ շաքար, կակոյի յուղ, չոր անարատ կաթ, կակաոյի զանգված, կաթնային ճարպ, էմուլգատոր, սոյայի լեցիտին, բուրավետիչ: Շոկոլադե կոնֆետ<< Կաթնային շոկոլադե ընկույզով կրեմի միջուկով >>: Բաղադրությունը՝ շաքար, կակոյի յուղ, աղացած անտառային ընկույզ, չոր անարատ կաթ, կակոյի զանգված, չոր շիճուկ ,

				<p>լակտոզա, չոր յուղագերծված կաթ, կաթնային ճարպ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչներ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ << Կաթնային շոկոլադ՝ անտառային ընկույզով և նուշով>>: Բաղադրությունը՝ շաքար, չոր անարատ կաթ, կակաոյի յուղ, մանրացված անտառային ընկույզ, կակաոյի զանգված, մանրացված նուշ, չոր շիճուկ, լակտոզա, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ<< Կաթնային շոկոլադ պրալինե – կրեմային միջուկով>>: Բաղադրությունը՝ շաքար, բուսական յուղ, չոր անարատ կաթ, կակաոյի յուղ, կակաոյի զանգված, չոր յուղագերծված կաթ, գլյուկոզա, լակտոզա, չոր շիճուկ, կաթնային ճարպ, կակաոյի փոշի, աղացած անտառայի ընկույզ, էմուլգատոր, սոյայի լեցիտին, աղ, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ ՝<<Մուգ շոկոլադ>>: Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի զանգված, կակաոյի յուղ, չոր սերուցք, չոր անարատ կաթ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ<< Մուգ շոկոլադ մարցիպանի միջուկով>>: Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի զանգված, աղացած նուշ, կակոյի յուղ, ֆրուկտոզա, գլյուկոզայի օշարակ, ինվերտ օշարակ , կաթնային ճարպ, գլյուկոզա, բուրավետիչներ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին:</p> <p>Շոկոլադե կոնֆետ << մուգ շոկոլադ ՝ մուգ մուսսի միջուկով>>: Բաղադրությունը՝ շաքար, կակոյի զանգված, բուսական յուղ,չոր յուղագերծված կաթ, կակաոյի փոշի, կակաոյի յուղ, լակտոզա, կաթնային ճարպ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ << Սուրճ և սերուցք >>: Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի յուղ, չոր սերուցք, չոր անարատ կաթ, կակաոյի զանգված, չոր յուղագերծված կաթ, լակտոզա, բնական սուրճ՝ բոված, աղացած, չոր շիճուկ, էմուլգատոր՝ սոյայ լեցիտին, աղ, բուրավետիչ:</p> <p>Կոնֆետների բոլոր տեսակները կարող են պարունակել աննշան քանակությամբ անտառային ընկույզի, նուշի, գետնընկույզի, այլ ընկույզների և ձվի հետքեր:</p> <p>100գ մթերքի սննդային արժեքը՝ սպիտակուցներ -7,8 գ Ճարպեր-36,1 գ: Այդ թվում հագեցած ճարպային թթուները -20գ,տրանս-իզոմերների զանգվածային մասը չհագեցած ճարպային թթուներում-0,2գ, ածխաջրեր՝ 49,9գ: Այդ թվում ՝ շաքար 48գ, աղ-0,18գ, էներգետիկ արժեք(կալորիականություն)2346 կջ-563 կկալ Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70 %:</p> <p>Տես նաև * ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ</p>
4	15842110	Շոկոլադե կոնֆետների հավաքածու տուփով	«Մերսի» (Merci) AUGUST STORCK KG Գերմանիա	<p>Շոկոլադե կոնֆետների 8 նրբաճաշակ տեսակներ՝ տուփով/ ընկույզով կրեմ, կաթնային շոկոլադ, անտառային ընկույզ և նուշ, պրալինե կրեմային միջուկ, մուգ շոկոլադ, մարցիպան, մուգ մուս, սուրճ և սերուցք Քաշը՝ 675գ</p> <p>Շոկոլադե կոնֆետների հավաքածու:</p> <p>Շոկոլադե կոնֆետ, << Կաթնային շոկոլադ>> Բաղադրությունը՝ շաքար, կակոյի յուղ, չոր անարատ կաթ, կակաոյի զանգված, կաթնային ճարպ, էմուլգատոր, սոյայի լեցիտին, բուրավետիչ: Շոկոլադե կոնֆետ<< Կաթնային շոկոլադե ընկույզով կրեմի միջուկով >>: Բաղադրությունը՝ շաքար, կակոյի յուղ, աղացած անտառային ընկույզ, չոր անարատ կաթ, կակոյի զանգված, չոր շիճուկ , լակտոզա, չոր յուղագերծված կաթ, կաթնային ճարպ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչներ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ << Կաթնային շոկոլադ՝ անտառային ընկույզով և նուշով>>: Բաղադրությունը՝ շաքար, չոր անարատ կաթ, կակաոյի յուղ, մանրացված անտառային ընկույզ, կակաոյի զանգված, մանրացված նուշ, չոր շիճուկ, լակտոզա, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ<< Կաթնային շոկոլադ պրալինե – կրեմային միջուկով>>: Բաղադրությունը՝ շաքար, բուսական յուղ, չոր անարատ կաթ, կակաոյի յուղ, կակաոյի զանգված, չոր յուղագերծված կաթ, գլյուկոզա, լակտոզա, չոր շիճուկ, կաթնային ճարպ, կակաոյի փոշի, աղացած անտառայի ընկույզ, էմուլգատոր, սոյայի լեցիտին, աղ, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ ՝<<Մուգ շոկոլադ>>: Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի զանգված, կակաոյի յուղ, չոր սերուցք, չոր անարատ կաթ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ<< Մուգ շոկոլադ մարցիպանի միջուկով>>:</p>

			<p>Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի զանգված, աղացած նուշ, կակոյի յուղ, ֆրուկտոզա, գլյուկոզայի օշարակ, ինվերտ օշարակ, կաթնային ճարպ, գլյուկոզա, բուրավետիչներ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին:</p> <p>Շոկոլադե կոնֆետ << մուգ շոկոլադե՝ մուգ մուսսի միջուկով>>:</p> <p>Բաղադրությունը՝ շաքար, կակոյի զանգված, բուսական յուղ, չոր յուղագերծված կաթ, կակաոյի փոշի, կակաոյի յուղ, լակտոզա, կաթնային ճարպ, էմուլգատոր՝ սոյայի լեցիտին, բուրավետիչ:</p> <p>Շոկոլադե կոնֆետ << Սուրճ և սերուցք >>:</p> <p>Բաղադրությունը՝ շաքար, կակաոյի յուղ, չոր սերուցք, չոր անարատ կաթ, կակաոյի զանգված, չոր յուղագերծված կաթ, լակտոզա, բնական սուրճ՝ բոված, աղացած, չոր շիճուկ, էմուլգատոր՝ սոյայ լեցիտին, աղ, բուրավետիչ:</p> <p>Կոնֆետների բոլոր տեսակները կարող են պարունակել աննշան քանակությամբ անտառային ընկույզի, նուշի, զետնընկույզի, այլ ընկույզների և ձվի հետքեր:</p> <p>Բաղադրություն՝ շաքարավազ, կակաոյի զանգված, կաթի փոշի, սերուցքի փոշի, նուշ, պնդուկ, կաթ, կարագ, շիճուկի փոշի, գլյուկոզա, կարագի յուղ, կակաո. էմուլգատոր, ինվերտային շաքարային օշարակ, ֆրուկտոզա, սուրճ, անուշաբույրեր, աղ:</p> <p>Սպիտակուցներ 100գ - 7.8 Ածխաջրեր 100գ - 49.9 Ճարպեր 100գ - 36.1 Կիլոկալորիա 100գ - 563 Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70 %: Տես նաև * ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ</p>
--	--	--	--

*** ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

- Մատակարարման հստակ օրը կսահմանվի նախապես, պատվիրատուի կողմից, ոչ ուշ քան 3 օրացուցային օր առաջ՝ պահանջագրով, էլ. փոստով:
- Մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրով սահմանված օրվա ժամը 9:00-ից մինչև 16:30-ը:
- **Տեղեկացվում է նաև, որ սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը:**

* Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
				Ապրանքի	հասցեն	Ժամկետը**
հատ	9000	225000	25	Ք. Նոր Հաճըն, Տոռոզյան 7	Պատվիրատուի ներկայացրած պահանջագրի հիման վրա	Օգոստոս-դեկտեմբեր
հատ	6000	150000	25	Ք. Նոր Հաճըն, Տոռոզյան 7	Պատվիրատուի ներկայացրած պահանջագրի հիման վրա	Օգոստոս-դեկտեմբեր
հատ	6000	150000	25	Ք. Նոր Հաճըն, Տոռոզյան 7	Պատվիրատուի ներկայացրած պահանջագրի հիման վրա	Օգոստոս-դեկտեմբեր
հատ	9000	225000	25	Ք. Նոր Հաճըն, Տոռոզյան 7	Պատվիրատուի ներկայացրած պահանջագրի հիման վրա	Օգոստոս-դեկտեմբեր

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

 /ստորագրություն/
 Կ.Տ

 /ստորագրություն/
 Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն դրամ

		Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	15842110	Շոկոլադե կոնֆետների տեսականի՝ տուփով	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	50%	50%	50%	100 %	100 %
2	15842110	Շոկոլադե կոնֆետների տեսականի՝ տուփով	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	50%	50%	50%	100 %	100 %
3	15842110	Շոկոլադե կոնֆետների հավաքածու տուփով	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	50%	50%	50%	100 %	100 %
4	15842110	Շոկոլադե կոնֆետների հավաքածու տուփով	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	50%	50%	50%	100 %	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

2. Հակադարձ աճուրդը կկայանա www.eauction.armeps.am էլեկտրոնային աճուրդով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով:

2.2 ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ24/30 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել www.eauction.armeps.am էլեկտրոնային աճուրդով գնումների իրականացումն ապահովող համակարգում հակադարձ աճուրդի ավարտմանը հաջորդող օրը՝ ժամը «10:00»-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Գոհարիկ Կարապետյան

Հանձնաժողովի անդամ՝

Աննա Գրիգորյան

Հանձնաժողովի անդամ՝

Աիդա Սարգսյան

Գնումների համակարգող՝

Տաթևիկ Հովհաննիսյան